

Ս. Ս. Սրբախմյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԿՐԿՆԱՍԵՐՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎՈՒՅԹԻ ՇՈՒՐՋԸ

Ժամանակակից հայերենի բայական համակարգում զգալի թիվ են կազմում այդպիսի բայերը, որոնց մեջ սեռային հատկանիշը միատարր չէ։ Այդ բայերը համապատասխան բայական բառաձևի մեջ միաժամանակ համատեղում են երկու սեռ՝ առաջ բերելով սեռային զուգահեռություն։ Այդ կարգի բայերը ժամանակակից հայերենում կարելի է կոչել կրկնասեռ բայեր։

Բայերի մեջ սեռային զուգահեռությունը պարզ կերպով երևում է թե՛ սեռի կատեգորիայի զարգացման պատմական ընթացքի և թե՛ առկա դրույթան մեջ։ Տվյալ դեպքում հարցը քննելով իրեն ժամանակակից հայերենի քերականական իրողություն՝ բայերի մեջ այն դիտում ենք առկալ դրույթամբ, ուսումնասիրում և արձանագրում ենք, որ այս կամ այն բառը իր մեջ միևնույն բառաձևի սահմաններում երևան է բերում ոչ թե մեկ, այլ երկու սեռի քերականական առանձնահատկություններ՝ առանց բառական-քերականական լրացուցիչ փոփոխությունների։

Այստեղ նկատի են առնվում այն բայերը, որոնք իրեն բառական միավորներ իրենց էությունը են ներկայացնում սեռային զուգահեռությունը։ Հասկանալի է, որ այս դեպքում խոսք կարող է լինել ներգործական և չեզոք սեռերի համատեղման մասին, քանի որ ժամանակակից հայերենում այս սեռերի արտահայտումը կախված չէ քերականական բառափոխությունից, տվյալ դեպքում՝ քերականական անանցումից։ Ներգործական և չեզոք սեռերը իրենց մեջ համատեղող կրկնասեռ բայերը մեզ ներկայանում են իրենց բառական սկզբնաձևերով, իրեն բառարանային ցանկի միավորներ։

Հայանի իրողություն է, որ բառարանները սովորաբար այդ կարգի բառերի զանազան առանձնահատկությունների հետ նշում են նաև սեռային այդ հատկանիշները, իհարկե, ըստ ճանաչման ու կազմողի կոմպոտենցիայի, որտեղ այս հարցի լուսաբանման համար կարևորը սկզբունքն է. հնարավոր է, որ որոշ կրկնասեռ բայեր չդիտվեն որպես այդպիսիք, կամ, ընդհակառակն, լինեն սխալ, ավելորդ նշումներ և այլն, սակայն անժխտելի է կրկնասեռության քերականական իրողությունը ժամանակակից հայերենի մի շարք բայերի մեջ։

Այդպիսի բայերի կրկնասեռությունը ի սկզբանե անտի տրված չէ այդ բայերին։ Իրեն քերականական իրողությունն այն հանդես է գալիս զանազան հիմունքներով, որոնք կապված են կենդանի խոսքի դրսևորումների, լեզվական-քերականական մի շարք իրողությունների հետ, պատահական ու խոտոր երևույթներ չեն։ Ուստի կրկնասեռ բայերի սոսկ թվարկումը հարցի պատկերացման համար չի կարող արդյունավետ լինել։ Միաժամանակ անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքները, որոնց վրա խարսխվում է կրկնասեռությունը։ Բնականաբար այստեղ պետք է հիշատակվեն նաև այն հիմունքները, որոնք հանդես են գալիս որպես սեռային փոփոխությունների հիմունքներ, գործոններ ու դրդապատճառներ։

1. Իմաստային հիմունքով առաջացող կրկնասեռությունը Բայի բառական իմաստի փոփոխությունները, տարբերակումները հաճախ ստեղծում են սեռային փոփոխություններ ու տարբերակումներ: Հայտնի է, որ նույն բառածեղի իմաստային տարբերակումները երբեմն շատ խոր են լինում և առաջ են բերում օտարացում՝ բնիմաստի համեմատությամբ, և դրա հիման վրա էլ գոյանում են նույն հնչյունախմբերով, սակայն տարբեր իմաստներով բառեր, այլ կերպ ասած՝ նույնանուն բառեր: Եթե բայերի մեջ նույն երևույթը զուգակցվում է նաև սեռի փոփոխությամբ, բնիմաստին՝ հատուկ սեռի համեմատությամբ սեռային նոր հատկանիշի առաջացմամբ, ապա դա այս դեպքում չի կարելի դիտել իբրև կրկնասեռության երևույթ՝ բայական մեկ բառածեղի համար: Եթե նույն հնչյունախմբով, բայց իմաստի ուժեղ տարբերակումով կատարվում է նոր բառի առանձնացում, ապա նրա հետ առաջացած սեռային տարբերակումն էլ պետք է առանձնացվի որպես այդ բառի սեռային հատկանիշ, ինչպես օրինակ հիշենք մեկնել՝ սրացատրել, ապարզել և այլն (ներգործական), մեկնել՝ զգնալ, ճեղհանալ և այլն (չեզոք), շրջել՝ շրջառ տալ (ներգործական), շրջել՝ շրջալել, ժամն գալ և այլն (չեզոք) և այլն: Նկատենք, որ այս նույնանուն բառերի բաժանումը կատարվել էր դեռ շատ հնում, նույնիսկ լծորդությունների տարբերությամբ (մի կողմից՝ մեկնել, շրջել, մյուս կողմից՝ մեկնիմ, շրջիմ): Այս կարգի բայերը նույնանուն են՝ տարբեր սեռերով: Բնական է, որ այսպիսիները չեն կարող համարվել կրկնասեռ բայեր:

Բառիմաստի տարբերակումների հիման վրա կրկնասեռ կարելի է համարել այնպիսի բայերը, որոնց մեջ իմաստային փոփոխությունները, տարբերակումները և այլն դուրս չեն գալիս նույն բառի իմաստային շրջանակից, մնում են սովոր բառածեղի իմաստային ոլորտում, և, հասկանալի է, որ իմաստային այդ իրողությունները եթե հատկացվում են միևնույն բայական բառին, ուրեմն նրանց հիման վրա հանդես եկող սեռային իրողությունները ես պետք է հատկացվեն նրան: Նման դեպքերում անխուսափելի են սեռային զուգահեռությունները միևնույն բայի քերականական հատկանիշների մեջ: Այս հիմունքով ներգործական և չեզոք սեռերի համատեղումով իբրև կրկնասեռ բայեր ժամանակակից հայերենում հանդես են գալիս անցնել, աշխատել, ապրել, լսել, խնայել, հոգալ, շանթել, նայել, պրծնել (բարբառային երանգով), սովորել, փչել և այլն:

Այսպես, անցնել ճեղհանալ, զնալ, անց կենալ և նման իմաստներով չեզոք է, ինչպես՝ Ձմեռն անցավ, իսկ սովորել, ուսումնասիրել իմաստով ներգործական, ինչպես Ձմեռն անցնում են ճ-րդ դասարանում: Աշխատել չեզոք է զգործ անել իմաստով, ներգործական է թեև բերել, շահել, վարձ ստանալ իմաստներով: Համառ. Վահանյանի ընդհանուր բաց կամ թողել, գնան ուրիշ տեղ փող աշխատեց...» (Ս. Խանգաղյան, շշուղը, 1): Սովորել չեզոք է շրջառ տեղանալ իմաստով, ինչպես՝ «...Արջի քոթոթը... հետզհետե սովորեց քաղաքին և մանավանդ Մասիսյանի տանը...» (Բաֆֆի, Մոսկի աքաղաղ), իսկ ռուսումնասիրել և նման իմաստներով ներգործական է (չեզոք՝ արհեստ՝ դաս սովորել և այլն): Փչել հիմնական իմաստներով ներգործական է. համառ. փող փչել, փուքս փչել և այլն կամ՝ Վեդատն աստված տյն օրից երբ հաճեցավ շունչ փչել...» (Մ. Նալբանդյան), իսկ ճեղհանալ առաջ գալ, քամի առաջանալ և նման իմաստներով չեզոք է, օրինակ՝ Պաղ-պաղ մեզի հետ

փչում է քամին» (Հովհ. Թումանյան, «Աշուն»): Այսպես էլ մյուսները: Սակայն տեղի սղուլթյան պատճառով բավականանա՞նք այսքանով:

2. Գրկնասեռություն՝ սեռային տեղաշարժերի ընթացքում: Այս հիմունքով առաջացող կրկնասեռությունը, իհարկե, ամբողջովին անջրպետված չէ նախորդից, քանի որ սեռային տեղաշարժեր են կատարվում նաև բառիմաստի փոփոխությունների հիման վրա, երբեմն էլ իմաստային փոփոխությունները զուգակցվում են սեռային տեղաշարժեր առաջացնող այլ զործոճների, ուստի այս առումով նրանք անբաժան են: Սակայն այս դեպքում խմբավորման համար հաշվի ենք առնում գերակշռող հիմունքը: Սեռային տեղաշարժերի երևույթը արտահայտվում է և խնդրառական բնույթի փոփոխության հիման վրա¹: Այս տեսակետից ժամանակակից հայերենին բնորոշ է չեզոք սեռի բալերից մի քանիսի անցումը կամ անցման հակումը դեպի ներգործական սեռը՝ առաջացած բաղական իմաստի և խնդրառական պահանջի ուղղակի, անմիջական դառնալու հիման վրա: Իսկ երբեմն էլ լինում է նաև հակառակ երևույթը: Այս կարգի սեռային տեղաշարժերը ժամանակակից հայերենում անժխտելի պատտ են:

Ուսումնասիրվող հարցի ճիշտ պատկերացման համար առանձնապես կարևոր է հաշվի ունենլ, որ բաղական սեռերի այսօրինակ տեղաշարժերը ժամանակակից հայերենում հանկարծակի վրա հասած կտրուկ փոփոխություններ չեն, սովորաբար դրանք մեղ ներկայանում են բավական տեական լինելիության դրուծյամբ: Զարգացման հենց այս տեական բնույթն է, որ այս կարգի փոփոխությունների ընթացքում հիշատակված բնույթի բալերի մեջ առաջ է բերում կրկնասեռություն, քանի որ առաջացող սեռային նոր երևույթը զուգակցվում է եղածի հետ, փոփոխման ենթարկվող բալի սեռային տրադիցիան իր տեղը միանգամից չի զիջում նոր առաջացող երևույթին: Այսպիսով, ստեղծվում է մի ալնպիսի դրուծյուն, երբ սեռային հին հատկանիշը դեռ լիովին չի անհետացել, բայց և առաջ է եկել նոր հատկանիշ, որն էլ իր հերթին դեռ վերջնականապես մոռացության չի մատնել նախկինը, ավանդականը. և այսպես նույն բաղական բառածեի մեջ որոշ ժամանակ համատեղ հանդես են գալիս երկու սեռերը (տվյալ դեպքում՝ չեզոք և ներգործական), մինչև որ նորը լիովին օրինական դառնա, իսկ հինն իսպառ մոռացվի ու լինի ոչ օրինաչափական տվյալ բալի համար: Նման դեպքերում երբեմնի կրկնասեռ բալը կղաղարի ալղպիսին լինելուց ու կղանա միասեռ բալ, և, հասկանալի է, այսպիսով սեռային անցումը կավարտվի: Իոնեև ալղ են ցուլց տալիս մեր լեզվի պատմության համեմատաբար ավելի երկար ժամանակաշրջաններին մանօրինակ պատերը:

¹ Այս մասին տե՛ս Վ. Առաքելյանի ուղադրավ հոդվածը՝ «Հայերենի խնդրառության մասին» (ՀՄՄԻ ԳԱ «Տեղեկագիր», 1953, № 7):

Ուսուցողական-մանկավարժական տեսանկյունով այսպիսի հարցեր է ուղափել Գ. Ներսիսյանը «Հայի սեռի և կերպի ուսուցումը» աշխատության մեջ (1943):

Հ. Բարսեղյանն իր «Արդի հայերենի բալի և խոնարհման տեսություն» արժեքամոք աշխատությանը կցած բալերի ցանկում համապատասխան նշումներ է անում զուգահեռաբար ներգործական և չեզոք սեռեր ունեցող բալերի դիմաց, սակայն բուն շարադրանքի մեջ մերմում է կրկնասեռության դաղափարը (էջ 131): Մեր խոսքը չի վերաբերում ներգործական բալերի (ուտել, թափահարել) ժամանակավոր-փոխաբերական առումներին վերաբերող միանգամայն ճիշտ դիտողություններին, այլ իրոք գոյություն ունեցող կրկնասեռությանը (ալխաուել, ալլրել բալերի համար):

ժամանակակից հայերենը որպես կենդանի ու զարգացող լեզու սեռալին անցումնային գեոևս չափարտված դրություն շատ բնորոշ փաստեր է բնծևոում ուսումնասիրողին: Յուրաքանչյուր բալի մեջ սեռալին ալդ անցումնային, գեո չափարտված պատկերը չի կարելի զնահատել ալլ կերպ, քան որպես կրկնասեռություն մեր լեզվի արդի շրջանի համար: Որպես օրինակ հիշենք՝ թագավորել, ծափահարել, կարոտել, հակել, սպասարկել, ունկնդրել և ալլն, մլուս կողմից՝ ափսոսել (ալ), ողջունել և ալլն:

Ահա մի քանի օրինակ կիրառություն մեջ՝ «...Հսկել եմ արթուն ևս ձեր գործերին...» (Հովհ. Թումանյան, «Մարգարեություն») — չեզոք, «Եվ օտար կանանց ժպիտը ծանոթ, և մեծ քաղաքի աղմուկը հլուսկեն... քուցս կոսկեն» (Վ. Տերյան, «Թափառումի սեր») — ներգործ., «Մարտին ապերն ու Սահակը պիտի լավ ճաշերն, որ կարողանան գիշեր ու ցերեկ հսկել այգին» (Ստ. Ջորյան, «Խնձորի այգին») — ներգործ.: Վարդառում էի իմ հայրենի ծովափին...» (Ավ. Բաճակյան) — չեզոք, «...Տղան գեոևս կարոտում է Կաքավ գլուղի աղբյուրը...» (Ա. Բակունց, «Կլորես») — ներգործ., «...Նրանք կարոտել են լեռնային արտոններ...» (Նույնը): Մուկկնդրում էինք զետերի երգին» (Դ. Սարյան, «Վերհուշ») — չեզոք, «Պապը հիացած ուկկնդրում էր նվագը» (Ստ. Ջորյան, «Պապ թագավոր, ...») — ներգործ.: Շրջանի շատ կոլոկալիստիկությունների էնք սպասարկում» (Ա. Խանգաղյան, «Հողը», 1) — չեզոք, «Նա շարունակ ներս ու դուրս էր անում՝ սպասարկելով սեղանը» (Մ. Արմեն, «Հեղեար աղբյուր», 11, 8) — ներգործ.: «Ես հիացած նայում էի նրան, մտքումս ծափահարելով նրա ամեն մի բառը» (Շիրվանզադե, «Երակ», X), «...Գարունները ողջ քաղավորեն...» (Հ. Շիրազ, «Թագադրում»): Վերջին երկու օրինակներում ծափահարել, քաղավորել բայերը գործածված են ներգործական սեռով, իսկ չեզոքը ինքնին հասկանալի է:

Ափսոսել (ալ), ողջունել բայերը մեր լեզվում ներգործական են եղել՝ հայցական խնդրառություն, սակայն դրա հետ միասին ալծմ ձևը են բերել նաև չեզոք սեռի և սրան հատուկ խնդրառության հատկանիշ: Ահա օրինակներ, որոնք հաստատում են նրանց կրկնասեռությունը: «Այն որ բախտն ես դու ափսոսում» (Հովհ. Թումանյան, «Պոետն ու մուսան»), «Շատերը ոչ թե խոտն ու մարագն էին ափսոսում, ալլ Լուրդյին» (Ք. Թափալցյան, «Կյանքի արշալույսը»), ապա՝ «Ափսոսացե՛ք դուք մեր և ձեր քաղաքներին» (Ն. Ջարյան, «Տոնօրյա խոհեր»): «Պիտի ողջունես ուղիս հեռավոր» (Վ. Տերյան), «Եվ ողջունում էինք մենք այգարացը ալդ» (Ն. Ջարյան, «Երկու սոնետ Արփիկի հիշատակին»), ապա՝ «...Մենք ողջունենք նոր տարուն» (Ս. Վահանյի, «Եղևներն»), «Արտուտներն ուրախ կանչելով թոան երկինքն ի վեր, զիլ ու բարձրաձայն ողջունեցին արևին» (Ծ. Թորգոմյան, «Անմար կրակներ»): Ինչ խոսք, որ հիշատակված բայերը նույնպիսի որոշակիություն ու նույնատեսակ խորություն հանդես չեն բերում սեռալին զուգահեռությունը, սակայն մի բան պարզ է, որ ալծմ դրանք ալլս կամ ալլն չափով ունեն սեռալին երկակի բնույթ: Այստեղ խանգարիչ հանգամանք չի կարող լինել ալլն, որ բառարանները դրանցից ոչ բոլորի համար են նշում կրկնասեռության սուանձնա-

¹ Այստեղ բերեցինք մի քանի բայերի համար որոշ օրինակներ: Դիտված երևույթներն ալլելի հիմնավոր ներկայացնելու նպատակով ալլելի շատ օրինակներ ինչպես այս, այնպես էլ ուրիշ շատ բայերի համար բերվում են բային նվիրված մեր տակավին անստիպ աշխատության մեջ, որից և առանձնացված է ներկա հոդվածը:

հատկությունը: Տվյալ դեպքում կարևորը այն փաստերն են, որոնք գոյություն ունեն լեզվի մեջ, որոնք, անշուշտ, պետք է դիտվեն և արժեքավորվեն:

3. Կրկնաստեղծություն՝ բայի արտահայտած գործողության հիմնական հատկանշոգ բնույթի ակտիվացման և համասեղման հիման վրա: Այս կարգի բառերը լուրահատուկ են նրանով, որ հիմնականում ունեն քերականական իմաստի ինքնամիութի բնույթ և դրանով իսկ դրսևորում են առարկայի բնորոշ հատկանիշը որպես սոսկ գործողություն կամ որպես սովորույթ, որը, սակայն, երբեմն ակտիվ բնույթ է ստանում՝ առաջ բերելով անցման զաղափար և այսպիսով բայի սեռի մեջ ստեղծում է երկակիություն: Դրանով բալը համասեղում է չեղոք և ներգործական սեռերի առանձնահատկությունները: Այստեղ, իհարկև, չպետք է նկատի ունենալ ժամանակավոր - փոխարևրական առումները, ալլ պետք է ընտրել այնպիսի բալեր, որոնք իրոք երկու սեռերի առանձնահատկությունները ընդգրկում են մեկ բառաձևում: Հիշենք օրինակներ: Բուրբլ բալը հատկանշում է ալն առարկաները, որոնք ունեն բուրբի հատկանիշ, ուստի այսպիսի հատկանշոգ գործողության ինքնամիութի բնույթը չեղոք է, ինչպես՝ թել միջօրևի բարկ արևի տակ, խիստ բուրում էիճ նարճիս ու ծոթոր...» (Ալ. Իսահակյան, «Աբու-լալա-Մահարի», 6), «Հանդարտ հոսում էր ալն առուն կապույտ, ևլ նշենին էր լուռ ափին բուրում» (Գ. Սարյան, «Վերհուշ»): Բերված օրինակներում բուրբլ բալով գործողությունը ներկայացվում է հատկանշոգ ինքնամիութի բնույթով, ուստի և չեղոք սեռով: Ալլ է պատկերը հետևյալ օրինակներում. «Հորուտ-մորուտն ծաղկանց ծովում Բուրում է բուլ ու երգեր» (Ալ. Բահակյան, «Բինգյու»), «Աղոտ լուսավորված դահլիճը խոնավություն էր բուրում» (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք», 1), «Ոսկեգուն էին նրա մազերը ու բուրում էիճ դարչին» (Դ. Մահարի, «Բալ-լադ Ձալուի և առաջին սիրո մասին», 3): Այստեղ ակներև է գործողության ուղղակի անցման բնույթը, ուստի և ներգործական սեռի առանձնահատկությունը: Ուրեմն պետք է ընդունել հիշյալ բայի կրկնասեռ լինելու փաստը: Շնչել բալը որպես շնչելու հատկությունը նշոգ բալ, որպես ալդ գործողությունը կենդանի լինելու հատկանիշ ներկայացնող բալ անցման իմաստ չունի և ալդ տեսակետից չեղոք է, օրինակ՝ «Բալց քանի դեռ շնչում եմ ես քո դեմ կանգնած կենդանի, Ականջալուր եղիր, արքա, արդարաձայն իմ խոսքին» (Գ. Սարյան, «Երգիչ Սալվարին»): Սակայն ալս բայի համար ավելի բնորոշ է անմիջական անցման զաղափարը, հմմտ. «Նա լիաթոք շնչում էր զարնանային մաքուր օդը», որը քերականորեն տալիս է ներգործական սեռի իսկ սրա համատեղումը առաջինի հետ՝ մեկ բառաձևում առաջ է բերում կրկնաստեղծություն: Ել ընդհանրապես եթև բալը իր իմաստով ներկայացնում է քերականական այնպիսի հատկանիշներ, որոնց հիման վրա գործողությունը կարող է դուրս գալ ենթակայի գործունեության ոլորտից և անմիջական անցում կատարել կամ, ընդհակառակն, առանց մտքի առկախության կարող է սահմանափակվել ենթակայի գործունեության ոլորտում, ստացվում է կրկնասեռություն:

Տեղալ բալը ժամանակակից հայերենում¹ հատկապես միջնորոտային տեղումների երևույթները նշելու դեպքում մեծ մասամբ քերականորեն սահմանափակվում է ենթակայի ոլորտում, սակայն երբեմն ալն ցուցաբերում է նաև

¹ Ել ո՛չ միայն ժամանակակից հայերենում, ալև զբաբարում, սեկայն տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ժամանակակից զբաբան լեզվին:

անցման գաղափար, ուստի և իր մեջ համատեղում է ներգործական և չեզոք սեռերի իմաստները: Օրինակ՝ «Սարերում ձյուն էր տեղում, իսկ կիրճում՝ անձրև» (Ս. Ունգադյան, «Հողը»): Այս և նման շատ դեպքերում բայը չեզոք է: Նրա ներգործական հատկանիշը ակներև է հետևյալ նախադասությունների մեջ. «...Յոյա, մպտա, հուր բոց տեղա Արևմուտքի մութի դեմ» (Հովհ. Թուրմաշյան, «Լամ Արփիկին»), «Այդ վայրկյանին պատշգամբից արճիճ տեղաց գընդացիրը» (Ա. Բակունց, «Բրուտի աղան»), «...Ջար թշնամին հուր ել տեղում...» (Ս. Տարոնցի, «Կռվի երթ»): Մեր օրերում ներգործական նշանակությունն ալնքան ուժեղ է, որ երբեմն արտահայտվում է նույնիսկ ալնպիսի դեպքում, երբ սպասելի էր չեզոք նշանակությունը, ինչպես՝ «Գարնանային երկինքը հանդարտ անձրև է տեղում...» (Գ. Սարյան, «Ուկրաինային»): Սա պայմանավորված է նաև նախադասության մոտքով և յուրահատուկ կառուցվածքով. ալն, ինչ ենթակա պիտի լիներ (անձրև), վերածվել է ուղիղ խնդրի, երկինք ենթակալի գործողությունն ալստեղ ակտիվ ընդլիժ է ստացել:

Բերված օրինակներում հայցական հոլովով արտահայտված ուղիղ խընդիրները քերականական նշանակությամբ մոտենում են, ալսպես կոչված, ներքին խնդրին (որպիսին կարող են ունենալ և՛ չեզոք, և՛ ներգործական բալերը), սակայն տվյալ դեպքում նշված բալերի անցողական ընդլիժը ալնքան որոշակի է, որ նրանց մեջ չի կարելի անտեսել ներգործականությունը:

Գործողության ինքնամիտի և ակտիվ ընդլիժների՝ մի բալածեում համատեղվելու հիման վրա սեռալին զուգահեռություն ունեն նաև ալ բալեր, ինչպես՝ գումել, զանգահարել, թևահարել՝ և ալն, որտեղ ալնի զգալի է անցողականությունը, ուստի և ներգործականությունը:

4. Կրկնասեռություն՝ երբեմնի տարբեր լծորդությունների նույնացման հիման վրա: Ժամանակակից հայերենում ունենք և լծորդության մի շարք բալեր, որոնք ալծմ նույն լծորդությամբ ունեն սեռալին զուգահեռություն, որը տարբեր լծորդությունների՝ պատմականորեն կատարված միօրինականացման արդյունք է:

Ալսպիսի բալերի չեզոք նշանակությունը արտահայտվել է ի լծորդությամբ, որը զալիս էր հնից և տարածում ուներ նաև նախասովետական շրջանի գրական հայերենում: Սակայն ալծմ ալղ լծորդությունը վերացել է ժամանակակից արևելահայ աշխարհագրի բալական համակարգից, իսկ բալերը միում են և լծորդությամբ, և դրանցից մի քանիսը միևնույն լծորդությամբ ցուցաբերում են ներգործական և կրավորական սեռերի զուգահեռ քերականական նշանակություններ²:

Անցյալում մարել, մեղմել. երկարել, խամրել, խռովել բալերը նույն ձևով (և լծորդությամբ) ներգործական սեռի էին, սակայն մարիլ, մեղմիլ, երկարիլ, խամրիլ, խռովիլ ձևերով չեզոք սեռի էին (վերջին երեքը ի լծորդությամբ զալիս են դեռ գրաբարից³): Փաստն ալն է, որ ալս բալերը ալծմ

¹ Հմմտ. Սո. Մալխասեանց, «Հայերէն բացատրական բառարան», համապատասխան բառերի բացատրությունները (նկատի չառնելով նույնացման իմաստները):

² Ի խոնարհման վերացումը բոլոր դեպքերում նույն արդյունքը չի տվել, այստեղ խոսվում է այն դեպքերի մասին, որոնք իրոք կապված են այդ երևույթի հետ:

³ Գրաբարում երկարել բալի համար կային տարբեր ձևեր: Ի լծորդությամբ այն հանդես էր գալիս յերկարիմ ձևով: Գրաբարում նշված բալերը կային տարբեր լծորդություններով: Դրանցից մարել բալը գրաբար մատենագրությամբ ալանդված չէ:

չեն պահպանում ի լծորդը, բայց սեռի տեսակետից ներգործականի հետ պահպանում են և չեզոք նշանակությունը, ուստի և կրկնասեռ են: Դա շատ պարզ կերպով երևան է գալիս կենդանի խոսքում, կիրառության մեջ: Մարի՛ր լույսը մշուշոտ և հուսերդ արձակիր...» (Վ. Տերյան, «Մահ»), «Իմ աչքերի մեջ այնքան կրակներ եմ մարել ևս ե՛վ հոգուս մեջ հուսահատ, այնքան աստղեր եմ մարել» (Ե. Ջարենց, «Հեռացումի խոսքեր»), «Ես մարում եմ խանդիս ցավառիժ Իոնկուճուկը անվերջ ու անվերջ...» (Ս. Կապուտիկյան): Այստեղ բայը ներգործական նշանակությամբ է: Սակայն նրա սեռային հատկանիշը այլ է հետևյալ նախադասություններում. «Կյանքս կանցնի, կմարի — բայց երգս կա, կապրի դեռ» (Ե. Ջարենց, նույն տեղում), «Էսի՛ր, լուցկի՛ իմ չնչին, Որ մարում ես իմ շնչից...» (Գ. Սարյան, «Լուցկի»), «...նվագի վերջին հրնշյունները մարեցին ծառի զով սաղարթներում» (Մ. Արմեն, «Հեզնար աղբյուր» — «Վերջաբան», 2): Այստեղ էլ բացահայտ է չեզոք նշանակությունը, սակայն չկա լծորդության տարբերությունը, ինչպես լինում էր անցյալում, օրինակ՝ «—Որդիս... գուցե ծերունին և մարեցավ կուրծքիս վրա...» (Բաճճի, «Պաշտպանի հիշատակարան», II, գ): Եթե լինել լծորդության տարբերություն և այժմ, ապա Մ. Արմենից բերված մարեցին չեզոք նշանակություն ունեցող ձևի դիմաց կունենայինք մարեցան, որը հատուկ չէ արդի գրական լեզվին: Հանդիպող հատ ու կենտ ձևերը հնացած են կամ բարբառային, ինչպես՝ «Այդ խավարի մեջ մի աղոտ լույս բռնկեց ու մարավ» (Մ. Մանվելյան, «Աղա խոսրովը») — մարավ || մարեցավ:

Մեղմել բայը ներգործական նշանակություն ունի հետևյալ նախադասությունների մեջ՝ «Դիտես դու մեղմել և՛ ցավ, և՛ խոկում ու վանել սրտից տրտունջն անօրոր» (Տերյան, «Կենդ հետ ևմ կրկին...»), բայց և զուգահեռաբար չեզոք է հաջորդում՝ «Եվ ահա տեսար նորից մեղմեց, դալկացավ լճի դեմքը...» (Դ. Դեմիրճյան, «Սևիականություն»): Այս իմաստով մեղմել բայը հարաբերակցվում է մեղմանալ չեզոք բային:

Իր սեռային բնույթով այս բային շատ մոտ է կանգնած երկարել բայը, որը նույնպես սեռային զուգահեռություն ունի: Ահա ներգործականի օրինակներ. «Քեզ եղբայրական բազուկ երկարեց, Քեզ առաջ տարավ Ռուսաստանը մեծ» (Ն. Ջարյան), «Հասարթյանը կռացել, իրանը երկարել էր առաջ ու թևաբաժան ժպիտը դեմքին ունկնդրում էր...» (Ս. Պանգադյան, «Հողը», 1): Չեզոքի օրինակներ. «Դղրդալից երթը հրապարակից երկարեց մինչև կամուրջ» (Ն. Ջարյան, «Հացավան», գլ. IX), «Երանք մնում են... ոչ երկարում են, ոչ կարճանում» (նույնը, XXIX), «Ամառնամոռի հյուսիսի ցողունները երկարել էին...» (Ս. Պանգադյան, «Հողը», 1): Այս բայն էլ չեզոք նշանակությամբ համազոր է երկարանալ բայի քերականական նշանակությանը:

«—Ո՞վ է՝ անդորր լուռ գիշերով մենությունս խռովում» (Ավ. Իսահակյան, «Իմ փերին») նախադասության մեջ ընդգծված բայը ներգործական սեռի է, ունի գործողության իմաստի անմիջական անցման հատկանիշ, իսկ «Նա խռովել է և վերջերս չի այցելում մեր տուն» նախադասության մեջ չեզոք սեռի է: Անհրաժեշտ է նկատել, որ խռովել բայի սեռային երկակիություն հետ կա նաև բառիմաստի երկակիություն:

Խամրել բայը ժամանակակից հայերենում գերազանցապես չեզոք է, բայց թույլ կերպով պահպանում է նաև ներգործական նշանակությունը, ինչպես՝ «Երևանյան բարկ արևը խամրում է զգեստի գույնը»: Անցյալում (խոսքը

աշխարհաբարի անցյալ շրջանի մասին է) այս բալլը մեծ մասամբ գործածվել է ի լծորդությամբ և ավելի քիչ՝ և լծորդությամբ¹։ Լծորդության տարբերությունը վերացել է, իսկ սեռայինը որոշ չափով անացել։

Դեռ հնից եկող այս կարգի մի քանի բալեր էլ ունենք, որոնք անցյալում և լծորդությամբ ունեին կրկնասեռություն (չեզոք և ներգործական), բայց դրա հետ միասին ունեին նաև լծորդության զուգահեռություն (և և ի)։ Եթե և լծորդությամբ և՛ ներգործական էին, և՛ չեզոք, ապա ի լծորդությամբ միայն չեզոք էին։ Դրանցից են՝ գորովել, դասակցել, խափարել, հավանել և ալն, որոնք ալժմ և լծորդությամբ այս կամ այն կերպ պահպանում են սեռային կրկնությունը, որը պետք է ընդունել վերապահություն, նկատի ունենալով այս ուղղությամբ եղած տարտամությունը, իսկ այս նույն տիպի բալերից ծագել և հորդել բալերը ժամանակակից դրական լեզվում արդեն որոշակիորեն հանգես են գալիս միայն չեզոք սեռով։ Պարզ է, որ մեր լեզվի արդի էտապի համար դրանք չի կարելի նշել որպես կրկնասեռ բալեր (թեև Ստ. Օւլխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ում դեռ հանձնարարվում է ծագել բալի ներգործական նշանակությունը)։

Այստեղ, իհարկե, խոսքը չի վերաբերում այն բալերին, որոնք ալժմ էլ լծորդության տարբերություններով սեռային տարբերություններ ունեն՝ ա լծորդությամբ չեզոք, իսկ և լծորդությամբ՝ ներգործական, ինչպես՝ ծխալ և ծխել, փողփողալ և փողփողել, կրերալ, և կրերել, թվալ և թվել, ծիալ և ծիել և այլն։

Մենք նկատի ունեցանք այն բալերը, որոնք սեռային զուգահեռություններ ունեն բացարձակ նույնաձևությամբ, առանց հնչյունական որևէ փոփոխություն և այն էլ առկա դրությամբ, ինչպես որ ալժմ սրանք ներկայանում են մեզ արևելահայ աշխարհաբարի արդի էտապում։

Այս բոլորով հանդերձ՝ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ հետադոտական նպատակներով կատարված կրկնասեռությունն առաջ բերող հիմունքների վերոհիշյալ խմբավորումները բոլոր դեպքերում առանձնակի ու միմյանցից անկախ չեն։ Երբեմն որոշ հիմունքներ միասնաբար են հանդես գալիս, զուգակցվում են, սակայն որոշ դեպքերում մեկը կարող է իշխող լինել, ուստի ըստ ալժմ էլ կատարվում է խմբավորումը։

Այսպիսով, ուսումնասիրությունները հաստատում են, որ ժամանակակից հայերենի մի շարք բալերի հատուկ է կրկնասեռության քերականական իրողությունը, այսինքն միևնույն բառաձևում ներգործական և չեզոք սեռերի համատեղումը, որը խարսխվում է տարբեր հիմունքների վրա։ Այդ հիմունքները որքան էլ տարբեր լինեն, բոլորն էլ ի վերջո հանգեցնում են բալի քերականական իմաստի ներգործական և չեզոք սեռերի զուգադրմանը նույն բալի սահմաններում։ Սակայն այդ զուգադրումն էլ կրկնասեռ բոլոր բալերի մեջ անխտիր նույն պատկերը չունի։ Որոշ բալերի մեջ երկու սեռերը համազոր են, չի զգացվում մեկի կամ մյուսի գերակշռությունը, իսկ որոշ բալերի մեջ էլ նրանք հավասար չեն, սեռային մի հատկանիշը ավելի ուժեղ է ու ավելի բնորոշ, իսկ մյուսը համեմատաբար թույլ, սակավ տարածված, բայց եթե մտնել է տվյալ բալի քերականական հատկանիշների ոլորտի մեջ, չպետք է անտեսվի, արժեքավորում պետք է ստանա ուսումնասիրողի կողմից։

¹ Գրաբարում գործածվել է խամբնմ, խամբանում և խամբլմ ձևերով ու տարբեր սեռերով։

Կրկնասեռության քերականական իրողությունը սերտորեն կապված լինելով լեզվի ներքին օրինաչափությունների հիման վրա տեղի ունեցող պատմական զարգացման հետ՝ լեզվի պատմության բոլոր էտապներում նույն բայերի մեջ միշտ նույնը չէ, ուստի կրկնասեռությունը որոշելիս պետք է հաշվի առնել բայի զործածությունը լեզվի զարգացման սովյալ էտապում, քանի որ անցյալ որևէ շրջանի կրկնասեռ բայը կարող է կորցրած լինել սեռային հատկանիշներից մեկը՝ ժամանակակից էտապում ներկայանալով իբրև միասեռ բայ, և, ընդհակառակն, արդի էտապում կրկնասեռություն ունեցող բայը կարող է անցյալում միասեռ եղած լինել և այլն: Բայց և բացառված չէ այն հանգամանքը, որ առանձին քայերի մեջ էլ կրկնասեռությունը լեզվի նախորդ շրջաններից գալով՝ կարող է շարունակվել նաև արդի էտապում որպես քերականական ավանդականություն:

Ժամանակակից հայերենի բայերի կրկնասեռությունը որոշելիս նկատի ենք ունենում նրանց ներկա զործածությունները: Պատմական էքսկուրսները ծառայում են արդի իրողությունների ճիշտ բացահայտման ու ըմբռնման համար իբրև օժանդակ միջոց: